

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Հայաստանի Հանրապետության
Նախագահի առարկությամբ 2001 թվականի հունիսի 24-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Ամանոր և Ծննդյան տոներ՝ նշվում են դեկտեմբերի 31-ից հունվարի 2-ը ներառյալ (Ամանոր), հունվարի 3-ին, 4-ին և 5-ին (նախածննդյան տոներ) և հունվարի 6-ին (Սուրբ Ծնունդ և Հայտնություն), ոչ աշխատանքային օրեր:

(1-ին հոդվածը խմբ. 10.12.09 ՀՕ-221-Ն)

Հոդված 1.1. Սուրբ Ծննդյան և Հայտնության տոնին հաջորդող՝ Մեռելոց հիշատակի օր՝ նշվում է հունվարի 7-ին, ոչ աշխատանքային օր:

(1.1 հոդվածը լրաց. 10.12.09 ՀՕ-221-Ն)

Հոդված 2. Բանակի օր՝ նշվում է հունվարի 28-ին, ոչ աշխատանքային օր:

(2-րդ հոդվածը լրաց. 20.11.02 ՀՕ-466-Ն)

Հոդված 2՝. Մայրենի լեզվի օր՝ նշվում է փետրվարի 21-ին:

(2՝ հոդվածը լրաց. 11.04.05 ՀՕ-80-Ն)

Հոդված 2՝. Աղբբեջանական ԽՍՀ-ում կազմակերպված ջարդերի զոհերի հիշատակի և բռնագաղթված հայ բնակչության իրավունքների պաշտպանության օր՝ նշվում է փետրվարի 28-ին:

(2՝ հոդվածը լրաց. 25.05.05 ՀՕ-105-Ն)

Հոդված 3. Կանանց տոն՝ նշվում է մարտի 8-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 4. Մայրության և գեղեցկության տոն՝ նշվում է ապրիլի 7-ին:

(4-րդ հոդվածը խմբ. 07.05.02 ՀՕ-335)

Հոդված 5. Ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝ նշվում է ապրիլի 24-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 6. Աշխատանքի օր՝ նշվում է մայիսի 1-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 7. Երկրապահի օր՝ նշվում է մայիսի 8-ին:

Հոդված 8. Հաղթանակի և խաղաղության տոն՝ նշվում է մայիսի 9-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 8. Ընտանիքի օր՝ նշվում է մայիսի 15-ին:

(8՝ հոդվածը լրաց. 11.05.11 ՀՕ-142-Ն)

Հոդված 9. Հանրապետության տոն՝ նշվում է մայիսի 28-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 10. Երեխաների իրավունքների պաշտպանության օր՝ նշվում է հունիսի 1-ին:

Հոդված 10՝. Բոնադասվածների հիշատակի օր՝ նշվում է հունիսի 14-ին:
(10՝ *հոդվածը լրաց. 31.05.06 ՀՕ-100-Ն*)

Հոդված 11. Սահմանադրության օր՝ նշվում է հուլիսի 5-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 12. Գիտելիքի և դպրության օր՝ նշվում է սեպտեմբերի 1-ին:
(12-րդ *հոդվածը փոփ. 11.04.05 ՀՕ-80-Ն*)

Հոդված 13. Անկախության տոն՝ նշվում է սեպտեմբերի 21-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 13.1. Ուսուցչի օր՝ նշվում է հոկտեմբերի 5-ին:
(13.1 *հոդվածը լրաց. 05.10.10 ՀՕ-134-Ն*)

Հոդված 14. Թարգմանչաց տոն՝ նշվում է հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը:

Հոդված 14.1. Տեղական ինքնակառավարման օր՝ նշվում է նոյեմբերի 10-ին:
(14.1 *հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-127-Ն*)

Հոդված 15. Երկրաշարժի զոհերի հիշատակի օր՝ նշվում է դեկտեմբերի 7-ին:

Հոդված 16. Սուրբ Վարդանանց տոն՝ բարի գործի և ազգային տուրքի օր՝ նշվում է Սուրբ Զատիկից 8 շաբաթ առաջ՝ հինգշաբթի օրը:

Հոդված 17. Սուրբ Էջմիածնի տոն՝ նշվում է Սուրբ Զատիկից 64 օր հետո՝ կիրակի օրը:
(17-րդ *հոդվածը լրաց. 26.09.01 ՀՕ-228*)

Հոդված 18. Հայաստանի Հանրապետությունում կարող են նշվել նաև ավանդական և եկեղեցական տոներ, միջազգային օրեր, իսկ կառավարության որոշմամբ՝ մասնագիտական և այլ տոներ ու հիշատակի օրեր:
(18-րդ *հոդվածը փոփ. 26.09.01 ՀՕ-228, լրաց. 10.06.09 ՀՕ-148-Ն*)

Հոդված 19. Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված՝ կառավարությունը կարող է աշխատանքային օրերը տեղափոխել:
(19-րդ *հոդվածը փոփ. 26.09.01 ՀՕ-228*)

Հոդված 20. Ազգային փոքրամասնություններին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կարող են նշել իրենց ազգային տոները և հիշատակի օրերը, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:
(20-րդ *հոդվածը փոփ. 26.09.01 ՀՕ-228*)

Հոդված 21. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 1996 թվականի մարտի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ հետագա փոփոխություններով և լրացումներով հանդերձ:

(21-րդ հոդվածը փոփ. 26.09.01 ՀՕ-228)

Հոդված 22. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

(22-րդ հոդվածը փոփ. 26.09.01 ՀՕ-228)

**Հայաստանի Հանրապետության
Նախագահ**

Ռ. Քոչարյան

Երևան
6 օգոստոսի 2001 թ.
ՀՕ-200